631.5
Հ-65

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1933

631.3
Ա-65

Պրոլետարներ բոլոր երկրների միացեք! 2010

ԱՇՆԱՆԱՑԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՅԵՐԿՐՀՈՂՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԿՈԼԼԵԳԻԱՅԻ
1933 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 12-Ի ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀՅՈՒՍ. ԿՈՎԿԱՍԻ ՅԵՐԿՐԳՈՐԾԿՈՄԻ
ԿՈՂՄԻՑ 1933 ԹՎԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-ԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ»
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ 1933

13 FEB 2013 76691

Համաձայն ՀԿ(բ)Կ Հյուսիսային Կովկասի Յերկրկոմի և Յերկրգործկոմի վորոշման և խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների առաջ կանգնած խնդիրների, Հյուսիսային Կովկասի Յերկրհողվարչության կոլեգիան սահմանում է 1933 թվի աշնանային գյուղատնտեսական աշխատանքների հետևյալ ագրոտեխնիկական պարտադիր կանոնները.

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ
ГОС. ЕПОЛИСТЕКА
ՀԱՅՍՌ-Արա ՍՍՌ
35896-62

1.
ԱՇՆԱՆԱՑԱՆ

1. Ցանքսաշրջանների ներմուծման հիման վրա, ապահովել աշնանացան բույսերի ցանքը գանգվածներով (մեծ տարածություններով), կատարելով առաջատար հացահատիկի — աշնանացան ցորենի ցանքը լավագույն նախորդ հողամասերում, առաջին հերթին գրավելով կանոնավոր մշակված ցելերը և մաքուր արոտատեղերը, յերկրորդ հերթին — շարատունկ բույսերից ազատվող տարածությունները և վերջին հերթին — հերկերի և շարատունկերի պակասության դեպքում — մաքուր արոտատեղը։

2. Հերկերի վերջին նախացանքային մշակումը կատարել վոչ ուշ, քան ցանքն սկսելուց 10 որ առաջ, ապահովելով

այնտեղ աշնանացան բույսերի ցանքը բացառապես շարավոր շարքացաններով։

3. Շարատունկերից ազատվող տարածությունների աշնանացանը կատարել հետևյալ ձևով.

ա) խնամքով հեռացնել շարատունկ բույսերի մնացորդները և մոլախոտերը, հնձելով, փոցխելով, դուրս կրելով և այրելով.

բ) մաքրելուց հետո անմիջապես վարել գութանով և միաժամանակ փոցխել.

Մոլախոտերի դեմ լավագույն կերպով պայքարելու և հնձվածների մնացորդները բոլորովին ծածկելու նպատակով, որոնք հանդիսանում են որպես գյուղատնտեսության վնասատուների բազմացման բուն, վար կատարել ոչ պակաս, քան 13—15 սանտիմետր խորությամբ։

4. Մաքուր արտատեղն աշնանացան ցորենի համար հատկացնելիս, ցողնամնացորդները պետք է նախապես այրել, տրորել և 10—15 որ հետո նորից վարել 15—18 սանտիմետր խորությամբ, դրանից հետո անմիջապես կամ միաժամանակ փոցխելով։ Արորված արտատեղը նորից վարելը կատարվում է ոչ ուշ, քան ցանքից 10 որ առաջ։

Այն դեպքում, յեթե տրորված և վարած արոտատեղը մինչև ցանքը բուսնում է, պետք է նախ քան ցանելը կուլտիվատորով վարել կամ կրկնակի փոցխել։ Աշնանացանին հատկացվող արտատեղերից և չմշակված հերկերից առաջին հերթին վարել և ցանել այն տարածությունները, որոնք աղտոտված չեն փշով, կորնգանով և վարսակով։

5. Հերկերի և անասնակոխի համար նշանակված հողամասերը, որոնք ամառվա ընթացքում չեն մշակվել, նախապես պարտադիր կերպով և խնամքով մաքրել, հնձելով և հետո այրելով խոտերը, որից հետո պետք է գութանով վարել ոչ պակաս, քան 15—16 սանտիմետր խորությամբ, հետագայում, ոչ ուշ, քան ցանքից 10 որ առաջ փոցխելով։

6. Ցանքը կատարել բացառապես շարավոր շարքացանով ու մարկերով։ Ուշ

վարած և դեռ չնստած հողերից առաջ անպայման հարթել հարթիչով կամ հարթել ցանքերը նախ քան ձմեռը։

7. Կտրականապես արգելվում է աշնանացան բույսերի շաղացանը։

8. Հաստատել աշնանացան բույսերի ցանքի միջին ռայոնական նորմաները յերկրամասի ռայոններում և մարզերում, նայած ցանքի ժամկետերին, առանձին հողամասերում յեղած մոլախոտերին, նաև հողաշերտային պայմաններին առանձին ՄՏ կայաններում, կոլտնտեսություններում և բրիգադներում, սակայն շեղումներ թույլ տալ վոչ ավել, քան 10 — 12 կիլոգրամ և յերկրամասի սահմանած ռայոնական միջին ցանքանորմաները ռայոնում ընդհանրապես պահել։

9. Նկատի առնելով աշնանացան բույսերի ցանքի նորմաների բացառիկ նշանակությունը, վորոնք (նորմաները) ազդում են ձմրանից հետո յեղած աճմանը, նաև ուղղակի ճնշում են մոլախոտերին, պարտավորեցնել բոլոր խորհտնտեսություններին, ՄՏ կայաններին և կոլտնտեսություններին, Յերկրհողվարչության և մարզային ու ռայոնական հողբաժինների սահմանած ցանքանորմաների պակասեցումը նայել վորպես վնասարար վերաբերմունք դեպի աշնանացանը, ամեն որ հսկելով ցանքանորմաների փաստացի կատարումը դաշտում։

10. Սերմերը ծածկելու խորությունը սահմանել աշնանացան հաճարի համար 4—5 սանտիմետր, իսկ աշնանացան ցորենի համար 5—7 սանտիմետր, թեթև հողերում ավելի խոր ծածկելով, իսկ ծանր հողերում ավելի յերեսանց և թույլ չտալ վոչ շատ խորը ծածկել սերմերը (7 սանտիմետրից խորը) և վոչ ել հողի յերեսը չծածկված սերմեր թողնել, վորը հաճախ վոչնչացնում է ցանքերը։

11. Արգելել ցանքը տրիերով չզտված սերմերով և անպայման ախտահանել ամբողջ ցորենն ու գարին։

12. Պարտավորեցնել ՄՏ կայաններին ու կոլտնտեսություններին ապահովել տեսակավոր ցանքերը նախորդ լավագույն

տարածությունների և հողի մշակումով, ցանքը կատարելով մաքրատեսակ սերմերով, համաձայն սահմանված ռայոնացման և տեսակավոր հատկությունների հետ միասին ձեռք բերել ցանքային հացահատիկի ֆիզիկական բարձր արժեքներ (հատիկի լրիվ քաշ, նորմալ աճողականություն և այլն)։

13. Ցանքերը պարտադիր կերպով ընդունել վոչ միայն սերմերը ծածկելուց հետո, այլ և ըստ ծիլերի յուրաքանչյուր շարքացանի և բրիգադի աշխատանքի վորակը գնահատելու և դրսեվորելու համար, կազմելով համապատասխան արձանագրություն, վորտեղ ցույց տրված լինի ցանքի բոլոր մասնակիցների և բրիգադիրների անունը, հայրանունը և ազգանունը և աշխատանքների արդյունքի գնահատումը՝ թե՛ ըստ ցանքի և թե՛ ըստ յուրաքանչյուր ցանքային խմբի ու բրիգադի ծիլերի,վերոհիշյալ արձանագրությունների պատճեններն ուղարկել ՄՏ կայաններն ու ռայոնական, մարզային հողբաժինները։

Արձանագրություն չկազմելը՝ համարել վորպես ցանքի վորակի գնահատումը դիտավորյալ թագցնելու քայլ, յենթարկելով հանցավորներին խստագույն պատասխանատվության։

2.
ԱՇՆԱՆԱՎԱՐ

1. Սահմանել վերարմատային մոլախոտերով չծածկված հողերի աշնանավարի հետևյալ խորությունը.

ա) ամուր, խոպան հողերի համար — 15 սանտիմետր,

բ) վաղուց հերկած, ինչպես և մեկ կամ յերկու տարի անվար մնացած հողերի համար — 18 սանտիմետր խոնավ և 20 սանտիմետր չորային գոտու համար.

գ) վաղուց վարած, տատասկով ծածկված հողերի համար վոչ պակաս, քան 20 սանտիմետր.

դ) շաքարի ճակնդեղի համար բոլոր դեպքերում վարել վոչ պակաս, քան 20—25 սանտիմետր խորությամբ, ընդունելով վոչ խոր աշնանավարի բոլոր դեպքերը

վորպես վնասարարություն, ուղղված բերքատվության իջեցման և մոլախոտերի բազմացման համար։

2. Հասարակ սեզով և խոզախոտով ծածկված հողերի աշնանավարը կատարել այն հաշվով, վորպեսզի շուռ տրվի վերարմատների հիմնական մասան և այրվի (18—20 սանտիմետր)։

Յեթե յեղանակների պայմանները խանգարեն հողի չորանալը և վերարմատների փչացումը, վաղ վարի ժամանակ տափանել ծանր տափաններով՝ վերարմատները դուրս հանելու և վոչնչացնելու համար։

3. Նախ քան աշնանավար կատարելը, պետք է անպատճառ դաշտերը մաքրել մոլախոտերից (հնձելով, այրելով և այլ միջոցներով), յերկար ցողուններ ունեցող մոլախոտերից և շարատունկ մշակույթների մնացորդներից, նախապես այրելով խոզանը։

4. Աշնանավարը կատարել միայն կորպուսավոր գութաններով, լայն կերպով գործադրելով նախագութանները և

դժոյնտերները հավասար կտրելով և շերտն ամբողջությամբ շուռ տալով, չվարած տեղ չթողնելով։

5. Նկատի առնելով, որ վաղ ցանքսի միջոցառումները 1934 թվին լայն չափերի կհասնեն, պարտավորեցնել խորհնտեսությունների և ՄՏ կայանների դիրեկտորներին և կոլտնտեսությունների վարչություններին վաղ ցանքսն ապահովել պատշաճ աշնանավարով։

6. Աշնանավարը կատարել առաջին հերթին վերին շերտը չհերկած հողամասերում, յերկրորդ հերթին՝ խոզանն այրած դաշտերում և յերրորդ հերթին՝ վերին շերտը վարած դաշտերում այն հաշվով, որպեսզի այդ բոլորը կատարվի առաջին հերթին առաջատար մշակույթներին հատկացված հողամասերում, համապատասխան ցանքսաշրջանառության դաշտերին։

7. Կորնդանով և տատասկով խիստ ծածկված հողերը հատկացնել ըստ հնարավորության վոչ թե հասկային մշակույթներին, այլ 1934 թվի գարնանավարին և ուշ հասնող և ուրիշ մշակույթներին (շարատունկ, կորեկ, խոտաբույսեր), այդ հողամասերում կատարելով գարնանավար։

8. Պարտավորեցնել տրակտորային բրիգադիրներին և դաշտավարական բրիգադներին կանոնավոր դնել գութանների աշխատանքը, ապահովելով նրանց պահեստի խոփերով, սիստեմատիկաբար սրելով խոփի կտրող մասերը։

9. Խոզանն այրելու ժամանակ, հնարավոր հրդեհներից խուսափելու համար, ապահովել հակահրդեհային միջոցառումների կյանքի մեջ մտցնելը, վորոնք մատնանշված են հակահրդեհային միջոցառումների հրահանգներում։

3.
ՇԱՐՔԱՏՈՒՆԿ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

Ա. ԱՐԵՎԱԾԱՂԻԿ

1. Սկսել արևածաղկի բերքահավաքը, յերբ նա հասնում է տնտեսական հասունության, յերբ նրա զամբյուղը տակի կողմից դեղնում է և չորանում ու թափվում են ցածի տերևները։

2 Բերքահավաքն ամենակարճ ժամկետում ավարտելու և Յերկրգործկոմի և Յերկրկոմի շարքատունկ մշակույթների մասին վորոշման համապատասխան կատարելու համար, ամենալայն չափով ոգտագործել յեղած լոբոգրեյկանները, կոմբայնները և ուրիշ մեքենաները, վերակառուցելով նրանց համապատասխան արևածաղկի բերքահավաքի և կալսի մեքենայացման ձեռնարկի, վորը կազմել է

գյուղատնտեսության մեքենայացման ինստիտուտի բաժանմունքը, ոգտագործելով այն խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների փորձը, վորոնք անցյալ տարի գործադրել են մեքենայացված բերքահավաքը։

Մեքենայի հետ միաժամանակ գործադրել և արևածաղկի ձեռքով կատարվող բերքահավաքը հետևյալ կերպով.

ա) կտրել զամբյուղները (գլխիկները) և յերկու շարք 6 — 9 զամբյուղներն անցկացնել ամեն մի ցողունի վրա։ Ցածի առաջին զամբյուղներն անցկացնել սերմերով դեպի վեր, իսկ վերջինը, վերինը — սերմերով դեպի ցած։

բ) կտրել արևածաղիկը արմատի կողմից հողի մակերևույթից 15 — 20 սանտիմետրից վոչ բարձր, պառկեցնելով ցողունները չորանալու համար ոձաձև։

Վճռականապես արգելել, վորպեսզի կտրված արևածաղիկները թափվեն դաշտում առանձին կույտերով անկարգ կերպով, ինչպես և թողնվի չկտրված արևածաղիկը տեղում։

3. Զամբյուղներն իրար վրա հագցնելու ձևով բերքահավաքը կատարել միայն բերքահավաքի սկզբից և մինչև զամբյուղների խպառ չորանալը, վորովհետև դրանից հետո զամբյուղները կոտրվում են և սերմերը թափվում։

Ցողունները ձեռքով կտրատելու միջոցով բերքահավաքը գործադրել բերքահավաքի սկզբից մինչև վերջը։

4. Արևածաղկի բերքահավաքը հարմարեցրած լոբոգրեյկաներով կատարել հասունանալուց 4—6 որ հետո, բոլորովին թույլ չտալով չափից դուրս հասունացած և մեքենայի հարվածներից թափվող արևածաղկի բերքահավաքը լոբոգրեյկաներով։ Մեքենայի աշխատանքի հետևից հավաքել կտրված բույսերը և ոձաձև փռել չորանալու համար։

5. Կորուստներից խուսափելու համար բոլոր լոբոգրեյկաները պետք է ունենան հատիկվորսիչներ։

6. Հացի կոմբայններով արևածաղկի բերքահավաքը կատարել այն ժամանակ, յերբ զամբյուղները բավականաչափ չո-

35896-62

բացել են, յերբ հատիկները հեշտությամբ կալսվում են։ Արևածաղկի բերքահավաքը կոմբայնով կատարելը յուրաքանչյուր դեպքում վորոշում է գյուղատնտեսը և միայն նրա թույլտվությամբ և նրա պատասխանատվությամբ են կոմբայններն անցնում աշխատանքի։

Մեքենայով չկտրված արևածաղկի զամբյուղները կտրտել ձեռքով և հավաքել մեքենայի անցնելուց հետո։

7. Արևածաղկի հավաքումը և դիզումը կատարել այն ժամանակ, յերբ նա չորանա կույտերում այն հաշվով, վորպեսզի չորացած արևածաղիկն անմիջապես կրվի դեզերը։ Դեզերը դասավորել զույգ-զույգ այն հաշվով, վորպեսզի կալսիչները կարողանան կանգնել դեզերի միջև և դեզերից կալսիչին տրվեն արևածաղիկներն՝ առանց մոտ բերելու։

8. Արևածաղկի կալսումն սկսել անմիջապես չորանալուց հետո և առաջնի 3—5 որ սայլերից, միաժամանակ դիզելով, վորից հետո սկսել դեզերից, շարունակելով դիզումը մյուս հողամասերում։

ՀՍՍՌ-Արմ ССР

9. Արևածաղկի կալսումը կատարել հիմնականում վերասարքավորած հացի կալսիչներով, գործադրելով միաժամանակ կալսիչների պակասելու դեպքում նաև թմբիչներով։ Արևածաղկի ամբողջ կալսումը յուրաքանչյուր առանձին տնտեսությունում պետք է ավարտվի վոչ ուշ, քան 7—10 որում և ընտրվեն հատուկ պատասխանատու մարդիկ արևածաղիկը հափշտակումից պահպանելու համար։

10. Կալսած արևածաղիկը նույն որը լավ մաքրել տեսակավորող մեքենաներով և դաշտից տանել կշեռքների մոտ, ամեն մի տարածն ուղեկցելով պատշաճ փաստաթղթերով։

11. Բոլոր հողամասերը, վորտեղ արևածաղկի ցողունները բարձր են թողնված բերքահավաքից հետո, բացի այն հողամասերից, ուր ցողունները թողնված են ձյուն կուտակելու համար, մաքրել և ազատել ցողուններից, հնձելով խոտհնձիչներով, լոբոգրեյկաներով, կամ ձեռքով, հավաքելով և այրելով այդ ցողունները մոխիր ստանալու կալիումի արդյունաբերության համար, ընդ վորում մոլախոտերով ծածկված դաշտերը չհնձած թողնելը ձյան կուտակելու համար արգելվում է։

12. Լոբոգրեյկաների և կտրող այլ մեքենաների վերաշինումը կատարել անմիջապես հասկայինների բերքահավաքից հետո և ավարտել 3—5 որում՝ մինչև արևածաղկի բերքահավաքն սկսվելը։

Բերքահավաքման մեքենաների և կալսիչների վերասարքավորումը կատարել համաձայն արևածաղկի բերքահավաքի և կալսման մեքենայացման մասին ձեռնարկի, վորը կազմել է գյուղատնտեսության մեքենայացման համամիութենական ինստիտուտը, հրատարակությամբ Հյուսիսային Կովկասի Յերկրհողվարչության 1933 թվի հուլիս ամսին (հրատարակչություն «Հյուսիսային Կովկաս»)։

Բ. ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ

1. Յեգիպտացորենի բերքահավաքն սկսել հատիկի տնտեսական հասունության մոմենտից։

Հաշվի առնելով բերքահավաքի ժամկետների կրճատման անհրաժեշտությունը, լրիվ բեռնավորումով, ոգտագործել ՄՏ կայաններում և տնտեսություններում յեղած պիկերները։

Պիկկերներով պետք է կատարել արևածաղկի այն բոլոր տեսակների բերքահավաքը, վորոնց պատատները գտնվում են այնպիսի բարձրության վրա, վոր թույլ է տալիս պիկկերի գործադրումը և վորոնք ցանված են համապատասխան լայնության միջշարքերով։

2. Յեգիպտացորենի ձեռքով բերքահավաքը կատարել պատատներն առանց փաթաթների կոտրտելու միջոցով, փաթաթները թողնելով ցողունների վրա, ամենալայն կերպով ոգտագործելով ամերիկական կեռերը, վորոնք զգալիորեն հեշտացնում և արագացնում են աշխատանքը։

3. Ձեռքով կտրած կամ պիկկերի սայլից թափված պատատները դարսել դաշտում կույտերով (յուրաքանչյուրում 5 ցենտ.) և նույն որը դաշտերից կրել, վոչ մի դեպքում չթողնել դաշտում գիշերը։

Անպատճառ կրկին ստուգում կատարել յեգիպտացորենի բերքահավաքի, թույլ չտալով, վոր պատատները մնան չհավաքված ցողունների վրա։

4. Նպատակ ունենալով դաշտերն ազատել յեգիպտացորենից՝ աշնանացանը ժամանակին ծավալելու համար, պիկկերների հետ միասին յերկրամասի հյուսիսային և կենտրոնական ռայոններում և Կուբանի հյուսիսային ռայոններում գործադրել յեգիպտացորենի բերքահավաքման համար լոբոգրեյկաներ և յեգիպտացորենն անմիջապես ցողունների հետ տանել և նեղ դեզ դարսել, իսկ պատատները կոտրտել և մաքրել դեզերից։

5. Յեգիպտացորենի բերքահավաքի վերջնական ժամկետը դաշտից սահմանել յերկրամասի ռուսական ռայոնների և Ադիգեյի համար 10—15 որ, իսկ ազգային մարզերի համար մինչև 20 որ, հաշված հաստնանալու սկզբից։

6. Յեգիպտացորենը մթերայաններն ուղարկելիս, ինչպես և պահելու համար դարսելիս, ջոկել պատատներն

ըստ խոնավության նշանների, անպատճառ առանձնացնելով չհասունացած, չզարգացած, հիվանդություններով վնասված և վնասատուներով պատառները։

Ավելի քան 17 տոկոս խոնավություն ունեցող յեգիպտացորենը պահելու համար լցնելուց առաջ նախապես չորացնել, հասցնելով խոնավությունը 15 տոկոսի։

7. Յեգիպտացորենը պահել լավ ոդափոխվող շտեմարաններում։

8. Յանելու համար ընտրել բոլորովին առողջ, չոր, տվյալ տեսակի համար տիպիկ պատառները, վորոնց պահել առաջ քաշված հատուկ պատասխանատու մարդկանց հսկողության տակ։

Սերմացու յեգիպտացորենը թույլ չտալ պահել գոմերի, անասնաբակերի, խոզանոցների չերդակներում։

Գ. ԳԵՆԱԳԵՐՉԱԿ

1. Գենագերչակի բերքահավաքի ժամանակը վորոշելու համար, սահմանել ամենորյա մշտական հսկողություն գենագերչակի դաշտերի վրա, սկսած ոգոստոսի 20-ից։

2. Գենագերչակի բերքահավաքը կատարել 2—3 նվազ, ըստ վինջերի հասունացման։ Հասունանալու նշաններն են հանդիսանում զամբյուղիկների և վոդկույզների ներքի մասի գորշ կարմրավուն կամ դեղնագույն դառնալը։

3. Կենտրոնական վինջիկների առաջին բերքահավաքը կատարել 3—4 որում, սկսած ներքևի զամբյուղիկների գորշ կարմրելու և դեղնելու մոմենտից։

Կողքի վինջիկների բերքահավաքը կատարել այդ վինջիկների վրայի զամբյուղիկների հասունանալու սկզբում։ Յուրաքանչյուր հավաքման ժամկետը պետք է լինի 3 որից վոչ ավելի։

Վոչ մի դեպքում թույլ չտալ մինչև զամբյուղիկների ճաքճքելու սկիզբը։

Փնջիկները կտրել սուր դանակներով։ Արգելել վինջիկների ձեռքով կտրելը։

4. Գենագերչակի կտրտելու աշխատանքը կազմակերպել հետևյալ կերպով, յուրաքանչյուր չորս շարքի վրա դրվում

ե մի ողակ, վորն ունի 2 կտրող և մեկ մատուցող։

Կտրված փնջիկները կտրողը ձգում է մատուցողի պարկը կամ զամբյուղը։ Մատուցողը հավաքածը տանում է հետևից յեկող սայլը։

16—20 շարք ընդգրկող յուրաքանչյուր 4—5 ողակներին տրվում է մեկ սայլ՝ կտրված փնջիկները կալը տանելու համար։

5. Կտրված փնջիկները բարակ շերտով փռել (2—3 փնջիկ) նախորոք պատրաստած կալում չորանալու և ինքնակալվելու համար։

6. Առանձին բացառիկ ուշադրություն պետք է դարձվի կալի կառուցմանը։ Կալերը շինել գենագերչակի դաշտերի կողքին, ընտրելով բարձր, քիչ դեպի հարավ թեքված տեղերը, առավելապես ամուր հողերի—խոպան հողերի կամ արոտատեղերի վրա։

Ամբողջ կալը պետք է խնաքով մաքրվի և ամրացվի, կամ նախապես ջրվի և վրան ցանվի ցորենի մղեղ կամ կուսապ։

Փնջիկները թափելուց առաջ կալը պետք է լավ մաքրվի։

7. Կալսած սերմերն ամեն որ յերեկոյան մոտ հավաքել կալից, վորի համար փնջիկների վողջ թեղը հավաքել կալի կողքերը, սերմերը հավաքել և անցկացնել քամհարի միջոցով։

Գենագերչակի մղեղը և թեղը կալի սահմաններից հեռացնել, իսկ չկալսված փնջիկների թեղը հետևյալ առավոտ փռել կալում հետագա ինքնակալման համար, կրկնելով այդ ոպերացիաները մինչև լրիվ կալնումը։

8. Վատ յեղանակների վրա հասնելու դեպքում կալում գտնվող փնջիկները հավաքել սրածայր կույտերով, կրկին փռելով կալում լավ յեղանակին կալը չորանալուց հետո։

Գենագերչակի յուրաքանչյուր անգամ հավաքածը դարսել կալերում առանձին։

Գարնանացանի կամպանիային Հյուսիսային Կովկասի գարնանացանի Կոմիտեյի հատուկ վորոշման համաձայն ստեղծված կոլտնտեսային ակտիվը, վորը

ստուգում է և վերահսկում գյուղատնտեսական աշխատանքների վորակը, աշխուժացնել և ամրացնել նրանց, վորոնք իրենց ցույց տվին վորպես կոլտնտեսականներ գարնանացանի և բերքահավաքման գործում, դնելով ցանքսի և աշնանավարի նախապատրաստության վորակը պատշաճ բարձրության վրա։

Աշնանացանի, աշնանավարի և շարատունկերի բերքահավաքի վերաբերյալ Ռայոնների և մարզերի հողվարբաժինների մշակած ագրոկանոնները վերանայել համապատասխան այս վորոշման և 3 որվա ընթացքում հասցնել ՄՏԿ-ներին, խորհնտեսություններին, կոլտնտեսություններին և անհատական տնտեսություններին, ապահովելով կյանքի մեջ նրանց կիրառումը։

Ցանքսի ժամկետների չարամիտ խախտումը, սերմերի զողությունը և ցանքսի նորմաների պակասեցումը, վոչ խոր կատարված գարնանավարն ու աշնանավարը, ցանելիս բաց թողնված տեղերը, վորոնց պատճառով ժոլախոտերով ծածկվում են դաշտերը և վիժեցվում բերքը, պետք է ընդունվեն, վորպես վնասարարություն և հասարակական սեփականության հափշտակում և հետապնդվեն հեղափոխական ամենախիստ որենքներով, համաձայն 1932 թվի ոգոստոսի 7-ի դեկրետի։

Բերքահավաքման փորձը ցույց տվեց, վոր մինչև այժմ դեռ տեղի ունի բոլորովին անթույլատրելի վերաբերմունք դեպի բարդ մեքենաներ և ցանքսերի մեքենայացված հավաքումը, վորը հակահարված է պահանջում դեպի հակամեքենայացման տրամադրությունները (շարքատունկ մշակույթների բերքահավաքը կոմբայններով, պիկկերներով, լոբոգրեյկաներով կատարել չուզենալը և վախը), վորպես հետամնաց և հակակոլտնտեսային տրամադրություններ։

Պարտադիր ագրոկանոնների խախտման համար անհրաժեշտ համարել սահմանել տուգանքներ կոլտնտեսությունների, բրիգադների և կոլտնտեսականների վերաբերյալ, վորոնք չարամիտ կերպով խախտում են ագրոկանոնները, ինչպես և դատական պատասխանատվության մի-

ջոցները, վոչ մի դեպք անպատիժ չթողնելով։ Այդ միջոցառումների մասին հրապարակել լրացուցիչ կերպով։

Գյուղատնտեսական աշնանային աշխատանքների ժամանակ ագրոկանոնների բարեխիղճ կերպով անցկացումը նախորդում և զարնանացանի կամպանիայի հաջողությունները և կոլտնտեսային դաշտերից մոլախոտերի իսկապես վերացումը, կոլտնտեսությունների ամրապնդումը, վորպես բոլշևիկյան կոլտնտեսությունների և կոլտնտեսականներին ունևորության մակարդակին հասցնելը։

Յերկրհողվարչության յեվ ՄՏ կայանների
քաղսեկտորի պետ՝ Ա. ՇՏԵՑՆՀԱՐՏ

3401
С х Х

Ответственный редактор А. Г. Аванов
Технический редактор Г. М. Маркарян
Сдано в набор 31/VIII 1933 г.
Подписано в печать 8/IX 1933 г.
Статформат Б6—125x176,
Уполкрайлит Б—438, Заказ № 4312
Об'ем 7/8 печ. лист. Тираж 2000
Тип. им. "Стачки 1902 г.„ СККПО
Г. Ростов н-Дону

Հայկական ԳՍՍՀ Գիտ. Գրադարան
Հանրապետական Գրադարան
Հ. ՍՍՌ-ում

ՀՀ Ազգային գրադարան
NL0293269

16691

ԳԻՆԸ 12 կոп.
Цена 12 коп.

На армянском языке

ОСНОВНЫЕ АГРОТЕХНИЧЕСКИЕ ПРАВИЛА ОСЕННИХ СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫХ РАБОТ

И-во „СЕВЕРНЫЙ КАВКАЗ“
ԳՐԱՊԱՀԵՍՏ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. № 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)